



Փաստաթուղթ  
քննարկման  
համար  
Փետրվար, 2012



## Առանց բացառության. Լեռնային Ղարաբաղի խաղաղ կարգավորման գործընթացում կարգավիճակի մասին մոտեցումների վերաիմաստավորում

Տարածքի, հակամարտող կողմերի և հակամարտության լուծմամբ լիազորվածների կարգավիճակը կենտրոնական դեր ունի Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) հակամարտության պարագայում: Հակամարտության հիմքում այն հարցն է, թե ինչ կարգավիճակ պետք է ունենա ԼՂ-ն՝ անկախություն, ինքնավարություն, ինքնակառավարում կամ մեկ այլ ձևակերպում,։ Կարգավիճակի խնդիրները հակասական են նաև Ղարաբաղի խաղաղարար գործընթացում, որում ԼՂ-ի բնակիչներն այսօր չունեն ֆորմալ ներկայություն: ԼՂ-ից տեղահանվածները ևս այն մարդկանց թվում են, ովքեր ամենաշատն են մեկուսացված, բայց, միևնույն ժամանակ, առավել շատ տուժածներն են հակամարտությունից:

Հավանաբար, հայ-ադրբեջանական բանակցային սեղանի շուրջ առավելս վիճահարույց հարցը հանդիսանում է կարգավիճակը, որն, ըստ էության, մի երկար ստվեր է գցում մնացած բոլոր հարցերի վրա: Դրա համար էլ այն պահանջում է ներգրավում, որպեսզի երկուստեք օգտագործեն իրենց ունակությունները այլընտրանքների ու առավել ճկուն մոտեցումների համար և մեղմեն խնդրի կործանարար ազդեցությունը այլ հարցերի շուրջ երկխոսության վրա: Հստակ է, որ քանի դեռ կարգավիճակը հասկացվում է որպես մի խմբի կամ քի միակողմանի գործողություն՝ բացառելով մյուսին, այլ ոչ թե ձգտումների արտահայտման արդարացի ու

Տիտղոսաթերթի վրա. Տեղահանված հայ ընտանիքի երեխանների սարքած պլաստիլինե կերպարներ ԼՂ-ի Շուշիի (Շուշա) «Նարեկացի» արվեստի ինստիտուտում:



ԼՂ-ի դե ֆակտո Ազգային ժողովի շենքը:

համընդգրկուն գործընթաց, այն փակուղի կիսացնի դեպի համաձայնություն տանող ճանապարհը:

Ըմբռնելով բազում կետերում առկա անհամաձայնությունները՝ քննարկման ներկայացվող սույն փաստաթուղթը ցույց է տալիս կարգավիճակի շուրջ հայ-ադրբեջանական երկխոսության հնարավոր ելակետերը: Այդ ելակետերը կարող են ընդունելի չլինել իրենց ներկայիս ձևերով մեկ կամ բոլոր կողմերի համար ժամանակի այս հատվածում, սակայն դրանք կարող են առաջարկել հարթակներ, որտեղ կա կամ առավել հստակ «համաձայնություն, թե որտեղ է ընկած անհամաձայնությունը», կամ պարզապես կան ապագա ուղղությունների միացման կետեր: Այն նաև առաջարկներ է ներկայացնում միջազգային հանրությանը, որպեսզի վերջինս ներգրավվի հիմնարար քաղաքական գործընթացներին, ինչն անհրաժեշտ է ապագայում կարգավիճակի հետ կապված առավել լեգիտիմ արդյունքների համար:

## 1. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավիճակ. անհամաձայնության գլխավոր կետերը:

Հայ-ադրբեջանական քննարկումներում կան անհամաձայնության մի շարք կետեր կարգավիճակի շուրջ:

### Ա. Կարգավիճակի իմաստը

Հայերը կարգավիճակի հարցը հասկանում են ինքնորոշման իրավունքի շրջանակներում՝ այն չտարանջատելով անկախությունից: Այս տեսանկյունից ԼՂ-ի հայերը որոշել են իրենց կարգավիճակը 1991 թ. դեկտեմբերի հանրաքվեում՝ քվեարկելով Ադրբեջանի կազմից դուրս գալու օգտին: Ըստ հայերի՝

սա նոր իրողություններ է ստեղծել, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը գոյություն ունի որպես մի նորանկախ պետություն, որը վաղ թե ուշ պետք է ճանաչվի միջազգայնորեն:

Ադրբեջանցիները կարգավիճակի հարցը հասկանում են տարածքային ամբողջականության սկզբունքի, Խորհրդային Ադրբեջանի և ավելի ուշ անկախ Ադրբեջանի սահմանների անքակտելիության

շրջանակներում: Այս տեսանկյունից ԼՂ-ի կարգավիճակը պետք է որոշվի Ադրբեջանի պետականության շրջանակներում: Թեև նախագահ Իլհամ Ալիևը խոսել է «հնարավորինս բարձր մակարդակի ինքնավարության» մասին, այս գաղափարը դեռևս չի հստակեցվել, սակայն այն, հավանաբար, ենթադրում է ինքնակառավարման

ինստիտուտներ, լայն մշակութային և լեզվական իրավունքներ, ինչպես նաև ինքնիշխանության խորհրդանիշներ, ինչպիսին է դրոշը:

Այս տարբեր ընկալումների վրա է հիմնված երկուստեք սխալ մեկնաբանությունների խաղը կարգավիճակի շուրջ հայ-ադրբեջանական քննարկումներում՝ նշում է ՂԿԻ-ի մասնակիցներից մեկը: «Մենք մի հոգեբանական թակարդի մեջ ենք, որտեղ հայերը ենթադրում են, որ ադրբեջանցիները նկատի ունեն «ինքնավարություն», երբ ասում են կարգավիճակ, և ադրբեջանցիները ենթադրում են, որ երբ հայերը ասում են կարգավիճակ՝ նրանք նկատի ունեն «անկախություն»:

### Բ. Կարգավիճակի ժամանակագրությունը

Ելնելով այս տարբեր ընկալումներից՝ հայերն ու ադրբեջանցիները համաձայն չեն նաև կարգավիճակի ժամկետների հարցում: Հայերը՝ հատկապես դարաբաղից հայերը, կարգավիճակի հարցը լուծված են համարում՝ այն արդեն պատմության մաս է նրանց համար: ԼՂ-ի կարգավիճակի հետագա ցանկացած որոշում չի կարող հետ տալ ժամացույցի սլաքը, այլ փոխարենը պետք է ուղղված լինի դեպի առկա իրողության միջազգային վավերացմանը, իրողություն, որպիսին հանդիսանում է անկախ հայկական մեծամասնություն ունեցող պետությունը ԼՂ-ում:

Հետևաբար, հայերը մասնավորապես շեշտը դնում են այդ վավերացման ժամանակահատվածի վրա: Նրանց կարծիքով այն պետք է տեղի ունենա հնարավորինս շուտ:

Ադրբեջանցիները կարգավիճակի հարցը տեսնում են որպես տակավին լուծվելիք խնդիր: Բաքուն մերժում է 1991թ հանրաքվեն որպես ԼՂ-ի անկախության քվեարկություն՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նա իր համաձայնությունը չի տվել այս քվեարկությանը, որ Ղարաբաղի ազերիները, ովքեր 1989թ. կազմում էին ԼՂ-ի բնակչության 22.4 տոկոսը, ևս բոլորովն են քվեարկությունը: Բաքուն ԼՂ-ի ներկայիս իրավիճակը գնահատում է որպես այլ պետության, իմա Հայաստանի ներխուժման արդյունք: Ուստի Ադրբեջանի կազմում ԼՂ-ի կարգավիճակը դեռևս բանակցությունների առարկա է: Այս մտտեցումը կապված է բնակչության քվեարկության կամ կարգավիճակի որոշման առավել ադոտ ժամանակահատվածի հետ, ակնհայտորեն ենթադրելով, որ ժամանակը հաշտեցման և Ադրբեջանի՝ որպես տարածաշրջանային տնտեսական ուժի, հետագա ամրապնդման հնարավորություն կտա:

#### Գ. Կարգավիճակի հաջորդականությունը

Մինակի խմբի միջնորդությամբ բանակցությունների ներկայիս խաղաղարար առաջարկը, որը հայտնի է Մադրիդյան սկզբունքներ անունով, պարունակում է մի շարք տարբեր գաղափարներ, որոնց հաջորդականությունը վիճելի է: Հայերի ու ադրբեջանցիների դիրքորոշումներում անհամաձայնություն կա առ այն, թե երբ է որոշվելու կարգավիճակը: Հայկական դիրքորոշումը փաստարկում է, որ կարգավիճակի վերջնական որոշումը պետք է սկզբից լինի, քանի որ այն դիտվում է որպես անվտանգության կարևոր երաշխիք, ուստի հենց որ այն համաձայնեցվի, ապա մասցած բոլոր խնդիրները ևս կլուծվեն:

Ադրբեջանական դիրքորոշումը փաստարկում է, որ մյուս քայլերը պետք է նախորդեն կարգավիճակին, մասնավորապես՝ տեղահանված մարդկանց վերադարձը: Սա իր հերթին հայերի մոտ մտավախություն է առաջացնում, որ Ղարաբաղի ազերիների համայնքի ժողովրդագրությունը դիտավորյալ կաղավաղեն, որպեսզի ավելացնեն նրա տեսակարար կշիռը հակամարտության սկզբին գոյություն ունեցածի համեմատ:

#### Դ. Կարգավիճակի տերը

Քննարկման շրջանակներում կա նաև անհամաձայնություն այն բանի սահմանման շուրջ, թե ով ունի կարգավիճակի իրավունք: Հայկական դիրքորոշումը ԼՂ-ի ներկայիս բնակչությունը սահմանում է որպես կարգավիճակի իրավունքի կրող, թեև այսօր ԼՂ-ում գործող օրենսդրության մեջ մի շարք իրավունքներ են նախատեսված ոչ հայ բնակիչների համար: Այդ օրենքներում ԼՂ-ն սահմանվում է որպես հայկական միավոր, որտեղ կարող են լինել այլ ազգային փոքրամասնություններ, սակայն ոչ պետականություն ձևավորող՝ անվանական ազգ:

Ադրբեջանական դիրքորոշումը կարգավիճակի շահառուներին դիտում է որպես բաղադրյալ միավոր, բաղկացած երկու ժողովուրդներից՝ Ղարաբաղի հայերից ու ադրբեջանցիներից, ովքեր Ղարաբաղը դիտում են որպես իրենց հայրենիք: Սա այսպես կոչված «համայնքային մոտեցում» է, որը մերժվում է հատկապես ԼՂ-ի կողմից: Այս մոտեցման հիմնական ենթատեքստն այն է, որ միայն «համատեղ հասարակությունը» կարող է որոշել ԼՂ-ի կարգավիճակը:

#### Ե. Կարգավիճակի վերաբերյալ բանակցության իրավունքը

Ի վերջո, հայերը և ադրբեջանցիները համաձայն չեն, թե ով է հանդիսանում իրենց համապատասխան գործընկերը կարգավիճակի շուրջ բանակցությունում: Ղարաբաղի հայերը Հայաստանը տեսնում են որպես համապատասխան գործընկեր Ադրբեջանի հետ բանակցություններում, որպեսզի որոշեն իրենց կարգավիճակը, և հատկապես զգայուն են այն փաստի վերաբերյալ, որ իրենք բանակցային գործընթացում ֆորմալ տեղ չունեն:

Սահմանելով հիմնախնդիրը որպես միջպետական հակամարտություն իր ու Հայաստանի միջև և վկայակոչելով Ղարաբաղի ազերի բնակչության բռնի տեղահանումը՝ Բաքուն երկար տարիներ մերժել է ԼՂ-ի դե ֆակտո իշխանությունը որպես լեգիտիմ բանակցային գործընկեր հատկապես շարունակվող օկուպացիայի պայմաններում: Բաքվի տեսանկյունից՝ Ղարաբաղի հայերի համապատասխան բանակցային գործընկեր է հանդիսանում Ղարաբաղի ազերի բնակչությունը, դրանով հաստատելով ԼՂ-ի երկեթևիկ բնույթը: Հետևաբար, Բաքուն անուղղակի՝ Երևանի միջոցով է բանակցություններ վարում կարգավիճակի շուրջ, իմա՝ նրանց հետ, ովքեր «վեր» են ԼՂ-ի դե ֆակտո իշխանության դեկլարանտից (դրանով են բացատրվում հայերի վերապահումները հակամարտության եզրաբանության վերաբերյալ): Այս դասավորվածությունը երբեմն ստեղծում է լրացուցիչ լարվածություն, առավել մեծ ծավալի ապատեղեկատվություն ու սխալ ըմբռնում, նաև զգալիորեն նեղացնում է խաղաղ գործընթացում շահագրգիռ կողմերի դաշտը:

## 2. Կետերի միացում

Չնայած այդ տարբերություններին՝ կա որոշ կետերի կոնվերգենցիա հայերի ու ադրբեջանցիների դիրքորոշումներում, եթե անգամ դրանք անուղղակի են:

#### Ա. Կարգավիճակի նեղ ու լայն հասկացությունները

Երկու կողմերում էլ դիրքորոշումները ուժեղ միտում ունեն ձևակերպել կարգավիճակը որպես մի արդյունք, որը տեղի է ունենում մի կարճ ժամկետում՝ գրեթե որպես իրադարձություն: Այսկերպ նեղացնելով կարգավիճակի շրջանակը՝ այն ներկայացվում է որպես մի խմբի սեփականություն, որը կարգավիճակի «որոշման» օրը «հաղթելու» է, մյուս խումբը կամ ժողովուրդը պարտվելու է ըստ էության: Սա կարելի է անվանել կարգավիճակի «նեղ» ընկալում:

Իսկ կարգավիճակի «լայն» ընկալումը կարող է կենտրոնանա ընթացիկ գործընթացների վրա, ինչպիսին են լեգիտիմ կառավարումը, ինստիտուցիոնալ կարողությունները և բոլոր խմբերի իրավունքների լայն շրջանակների ապահովումը: Կարգավիճակի այս հասկացությունը դիտվում է որպես փոխհարաբերություններ մի ամբողջ շարք, որը թույլ է տալիս քաղաքական ինքնությունը դիտել և ճանաչել լեգիտիմ: Այն ոչ թե իրադարձություն է, այլ երկարաժամկետ և հաջորդական գործընթաց պարտականություններով և իրավունքներով ամրագրված:

Ղարաբաղյան հակամարտությունը երկար ժամանակ հարմար հիմք է եղել կառավարման հարցերի ընտրողական նկարագրման համար, քանի որ այն ներկայացվում էր որպես ինչ-որ կողմի դժգոհություններն անհարկի բարձրացնելու միջոց կամ որպես «մյուս կողմի խնդիր»: Այդուհանդերձ, հայերն ու





Աղբբեջանական ընտանիքի անդամներ, ովքեր տեղահանվել են Շուշիից և ապրում են Բաքվում: (աղբբուրը՝ bbrussian.com)

աղբբեջանցիները նույն գործելաճան ունեն կառավարման պակասը քննադատելիս, երբ հարցը վերաբերում է կարգավիճակին: Սա ակնհայտ շրջանաձև փաստարկներ է մի շարք հանրաքվեների ու բնակչության քվեարկության, որոնք տեղի են ունեցել վաղ 1990-ականներին և որոնք այսօր նկատի են առնվում տարբեր դերակատարների կարգավիճակը լեգիտիմացնելու համար: Այս քվեարկությունները ընտրողաբար մերժվում են յուրաքանչյուր կողմում, մինչդեռ կողմերն ընդհանուր առմամբ պայքարում են նմանատիպ հիմքերով՝ մանդատի ու խաղաղ անցկացման համար: ՂԿԻ-ի քննարկումներում փոխադարձ բացառումը եղել է միջհակամարտային լեգիտիմության պակասի հերթական բացատրությունը, եթե ոչ միակը այս արդյունքների համար:

Բ. Տեղահանված անձանց իրավունքները կարող են և պետք է հասցեագրվեն

Կարգավիճակի որոշման հերթականությունը և տեղահանված անձանց վերադարձը առավել մեծ անհամաձայնության աղբբուր են: Սակայն, ի տարբերություն մնացած հակամարտությունների, որտեղ տեղահանվածների հոսքը առավել շատ միակողմանի է եղել, և ժողովրդագրական մեծամասնություն առավել քիչ է եղել կամ գոյություն չի ունեցել, ԼՂ-ի հակամարտության դեպքում առավել շատ ներուժ կա ճանաչելու տեղահանված անձանց իրավունքները որպես համընդհանուր խնդիր:

ԼՂ-ի կարգավիճակի քննարկման համատեքստում այս հարցն ընկալվում է այսպես՝ արդյո՞ք Ղարաբաղի ազդերիները հնարավորություն կունենան վերադառնալ Ղարաբաղ, կարո՞ղ են նրանք նման բան ցանկանալ: Երբ այս հարցը ձևակերպվում է որպես առանձին խնդիր, ապա ավելի հավանական են նոր վեճերը: Համաձայնությունն առավել հնարավոր է, եթե խնդիրը ձևակերպվի որպես հարցերի խմբի մի բաղադրիչ, որը վերաբերում է տեղահանված անձանց տարբեր խմբերի:

ՂԿԻ-ի քննարկումներում միջհակամարտային համաձայնություն կար առ այն, որ Ղարաբաղի ազդերիների վերադարձը ԼՂ հնարավոր է և անհրաժեշտ, եթե որոշակի պայմաններ ապահովվեն: Առաջին՝ այն պետք է իրականացվի որպես համապարփակ, փոխադարձ ծրագիր՝ թույլ տալով ապահովել հակամարտության բոլոր տեղահանված անձանց՝ աղբբեջանցիների, հայերի և մյուսների իրավունքները: Երկրորդ՝ այն հնարավոր կլինի, եթե վերադարձի գործընթացը կամավոր լինի, և ապահովվի այս սկզբունքը թե վերադարձողների, թե ընդունող համայնքների համար:

Գ. Փակելով հռետորական բացը

Ռազմատենչ հռետորությունը և ուժի կիրառման սպառնալիքը հավասարեցնում են կարգավիճակի խնդիրը գոյատևման այն հարցին, թե արդյո՞ք ԼՂ-ն ու նրա ներկայիս բնակչությունը շարունակելու են գոյություն ունենալ: Կրկին կարգավիճակի խնդիրը վերաձվում է «սուսալիտակ» հարցի, թե ում գոյատևման բարձրաձայնումը ինստիտուտների և գործընթացների քննարկումները կդարձնեն անհարկի: Այնուամենայնիվ, ստատուս քվոի պնդումները ևս, ըստ էության, հանդիսանում են ուժի կիրառման արդյունքների հաստատում: Հետևաբար, կա հռետորության անօգուտ էության համընկնման մի կետ, որը հաստատում է անցյալում կամ ապագայում ուժի կիրառումը, որպեսզի լուծվի Ղարաբաղի հակամարտությունը: Մասնակիցներից մեկի խոսքերով. «նույնիսկ ամենալավ

խաղաղության պլանը ներկայիս հռետորության միջավայրում կձախողվի»:

Բացի ուժի կիրառման սպառնալիքներից, կարգավիճակի մասին ներկայիս հռետորությունը հաճախ վերաբերում է խորհրդային անցյալին, որը շղարշված է անօգուտ

ժանր անցյալով: Օրինակ, «ինքնավարություն» եզրույթը և անմիջապես արտացոլում է այն մարդկանց մերժումը, ովքեր ենթադրաբար պետք է լինեն շահառուները, և չի հանդիսանում օգտակար կետ երկխոսության համար: Նոր խոսելաձև է անհրաժեշտ ներկայիս քննարկումներում, որը չի ներմուծում հնացած իմաստներ՝ կապված անգործունակ կառավարման պատմության հետ:

Դ. Բացակայող խոսակցությունների ռազմավարությունը

Ղարաբաղի հակամարտությունը առաջացել է մի քանի մակարդակներում՝ ազգամիջյան, միջհամայնքային, կենտրոն-ծայրամաս և միջազգային: Ներկայիս խաղաղ գործընթացը միավորում է այս մակարդակները մեկ երկխոսության մեջ՝ Հայաստանի ու Աղբբեջանի նախագահների միջև: Սա հակամարտությունից տուժած մի քանի խմբերի ու մասնակիցների դարձնում է ոչ ունակ խոսելու միմյանց հետ, ինչն էլ ընդգծում է մի քանի «բացակայող խոսակցություններ», որոնք մի օր պետք է բացվեն հանուն խաղաղության, որպեսզի այն լինի կենսունակ:

Որոշ մակարդակներում բոլոր կողմերն էլ և մասնակցում են բացակայող խոսակցությունների ռազմավարությանը որպես ճանապարհ խուսափելու իրենց դեմ ներկայացված պահանջներին լեգիտիմություն տալուց, և դատապարտում են այն որպես մերժում այն բանի, ինչը նրանք տեսնում են որպես իրենց լեգիտիմ պահանջ: Կարգավիճակի քննարկումների խոսապատասխան երկու օրինակներն են. բացակայող խոսակցությունը ԼՂ-ի դե ֆակտո իշխանությունների ու Բաքվի միջև, և

Ղարաբաղի հայերի ու Ղարաբաղի ազերիների միջև: Արդյունավետ երկխոսության գործընթացը, որը կհասնի կարգավիճակի վերաբերյալ լեգիտիմ արդյունքի, դժվար է պատկերացնել առանց այս դերակատարների միջև լայն, երկարաժամկետ երկխոսության: Հայերը և ադրբեջանցիները կարող են չհամաձայնել, թե ինչպես, երբ, որտեղ և ում կողմից այս բացակայող խոսակցությունները պետք է բացվեն: Մակայն այս ընկալումների վերաբերյալ միացող կետեր կան, ըստ որի առանց այս խոսակցությունների՝ երկխոսությունը կժամա մասնակի, ավելի քիչ լեգիտիմ և դաշտային իրականությունից կտրված:

### 3. Քաղաքականության էականության ոլորտները

#### Ա. Չափորոշիչները և կարգավիճակը

Հայ-ադրբեջանական անհամաձայնությունը Հայ-ադրբեջանական անհամաձայնությունը չափորոշիչների ու կարգավիճակի վերաբերյալ արտացոլում է նրանց տարբեր մեկնարկային կետերը սույն քննարկումներում: Հայկական դիրքորոշումը փաստարկում է, որ կարգավիճակը որոշված է, բայց դեռ ճանաչված չէ: Հայերը նաև պնդում են, որ ԼՂ-ն ունի կառավարման ինստիտուտների փորձի վրա հիմնված պահանջ, որը լեգիտիմ է մի քանի ուղղություններով՝ գոնե ԼՂ-ում ապրող բնակչության աչքերով: Հայկական չափավոր տեսանկյունից քննարկումները վերաբերում են չափորոշիչներին նախքան ճանաչումը, թեև գործնականում այդ դիրքորոշումը կարող է հեշտորեն փոխվել առավել պաշտպանականի՝ ճանաչում ու միայն հետո չափորոշիչներ: Հայկական փաստարկները նույնպես, որպես կանոն, մերժում են միայն ԼՂ-ում չափորոշիչների բացառիկ կենտրոնացումը, պնդելով, որ փոխարենը Ադրբեջանում համակողմանի մոտեցում, այդ թվում չափորոշիչների վերաբերյալ քննարկում, ձևավորվի և դրա առավել քիչ չափով՝ Հայաստանում: Այլ կերպ ասած՝ չափորոշիչները պետք է սիմետրիկ լինեն:

Քանի որ ադրբեջանական դիրքորոշումը պնդում է, որ կարգավիճակը որոշված չէ և կհաստատվի ապագայի անորոշ ժամկետում, ապա քննարկումները չափորոշիչներ նախքան կարգավիճակ սկզբունքի մասին է: Մակայն գործնականում ԼՂ-ի չափորոշիչների ադրբեջանական հեռանկարների մեծ մասը սահմանափակված է հրամայականով՝ կանխելու ԼՂ-ի հնարավոր իրավական անկախացումը: Հետևաբար, ադրբեջանական դիրքերը հեշտությամբ հուշում են իրենց համապատասխան շրջված ու թյուր լինելով՝ կարգավիճակ նախքան չափորոշիչներ, որտեղ կարգավիճակը ենթադրվում է լինել պակաս, քան անկախությունը:

Մինչդեռ չափորոշիչներ նախքան ճանաչումի և ճանաչում նախքան չափորոշիչների միջև կա հնարավոր համընկում՝ դա չափորոշիչների կարևորությունն է: Մի կողմից Ղարաբաղի հայերը շահագրգռված են ցույց տալու, որ չափորոշիչներն արժանի են ճանաչման: Մյուս կողմից, որպեսզի հեռակա իրագործելի լինի Ադրբեջանի ինքնավարության առաջարկը և ազերիների ԼՂ վերադարձնալու գործնական հայեցակետը, պետք է նախադրյալներ լինեն այսօրվա ԼՂ-ում գործող հաստատություններին

կողմից որոշ չափի ընդունելության: Մի շարք կառավարման ունակությունների զարգացումը, այդ թվում՝ օրենքի գերակայությունը, ներկայացուցչական հաստատությունները, խոսքի ազատությունը, սեփականության իրավունքը և ազատ շուկայական տնտեսության զարգացումը, ուղիղ առնչություն ունի ԼՂ-ի հասարակության ունակության հետ՝ մեկ օր ընդունելու և միավորվելու վերադարձող բնակչության հետ: Ուստի չափորոշիչները ԼՂ-ում կարևոր են, անկախ նրանից, թե ով է համապատասխան հակամարտության նախընտրած վերջնական կողմը:

#### Բ. Կարգավիճակի արտաքին ուղղվածությունը

Հայկական դիրքորոշման էլակետը՝ ԼՂ-ի կարգավիճակի հնարավոր արտաքին ուղղվածության վերաբերյալ, խարսխված է այն բանի վրա, թե ինչպես միջազգային հանրությունը կարող է հարաբերվել ներկայիս ԼՂ-ի դե ֆակտո իշխանությունների հետ՝ շեշտը դնելով ներկայիս չճանաչված ինստիտուտների պահպանման վրա, ինչպես որ դրանք այսօր գործում են: Ադրբեջանական տեսանկյունը բխում է այն ենթադրությունից, որ Ադրբեջանը որոշակի ազդեցություն կունենա, թե ինչպես միջազգային հանրությունը կհարաբերվի ԼՂ-ի իշխանություններին հետ: Մա նաև կապված է այն ենթադրության հետ, որ արտաքին աշխարհի հետ շփումը կապված է “միասնական հասարակություն” ձևավորման հետ՝ այդ թվում ԼՂ-ի ադրբեջանցիներով:

Հետևաբար, ընկալման պակաս կա, թե արդյո՞ք մտացածին միջանկյալ կարգավիճակը այսօրվա իրավիճակի համեմատ կարող է հանգեցնել քիչ թե շատ անկախ որոշումների կայացման համակարգի: Մակայն ՂԿԽ-ի քննարկումներում կարգավիճակ վերադարձի դիմաց երկընտրանքի մի կտրվածքում տարբեր տեսակետներ կային Ղարաբաղի այն ինստիտուտների վերաբերյալ, որոնք օգտվում են այդ հնարավորությունից: Արդո՞ք “միասնական հասարակությունը” պետք սկզբից ստեղծվի՞ որպես միջազգային ասպարեզ մուտքի պայման, թե միջազգային ասպարեզ մուտքը պետք է դիտվի որպես գործոն, որը նպաստում է հնարավոր “միասնական հասարակություն” ձևավորմանը: Ցանկացած խաղաղապահ օպերացիայի անհրաժեշտությունը, ձևն ու կազմը ևս հանդիսանում են անհամաձայնության գլխավոր աղբյուր:

Այնուամենայնիվ, բացի այս էլակետային դիրքորոշումներից, առավել շատ համաձայնության ներուժ կա այն ենթադրության մեջ, որ արտաքին ներգրավումը անհրաժեշտ է անվտանգ

և ապահով միասնական հասարակության հիմքեր ստեղծելու համար: Թեև վերջնական սցենարները կարող են տարբերվել, կրկին ընդհանուր հիմք կա ԼՂ-ի իշխանությունների ու հասարակության հետ արտաքին շփումների անհրաժեշտության համար:

Որտեղ անվտանգությունը վերաբերում է արտաքին աջակցության ներուժին՝ այն չի սահմանափակվում կոշտ անվտանգությունով: ՂԿԽ-ի մասնակցիները համաձայնել են, որ մարդու իրավունքների, օրենքի գերակայության և փոքրամասնության իրավունքների աջակցության հարցում օգնության կարիք կլինի:

Սկզբում ԼՂ-ի մասնակցիները մերժեցին այս գաղափարը՝ այն տեսնելով որպես իրենց

**‘Նույնիսկ ամենալավ խաղաղության պլանը ներկայիս հոետորության միջավայրում կձախողվի:’**

ինքնիշխանության հնարավոր խախտում և պնդելով, որ ներկայիս ինստիտուտները կարող կլինեն կատարել այս պարտավորությունը: Մակայն քննարկումից հետո այն մասին, թե ինչպես են ներկայիս ինստիտուտները ձևավորվել առանց կարիք ունենալու լուծել խոցելի և կասկածելի համայնքների կարիքները, նրանք համաձայնեցին, որ ինչ-որ փոփոխությունների կարիք կլինի: Բոլոր մասնակիցները նաև համաձայնվեցին, որ միջազգայնորեն համաձայնեցված մեխանիզմի կարիք կա Ղարաբաղ մարդկանց և առևտրի ելուժուտի համար: Նաև որոշ համաձայնություն կար, որ ԼՂ-ի ներկայիս դե ֆակտո ինստիտուտների ամբողջականության պահպանումը և բարելավումը կարող է թույլ տալ նրանց դառնալու առավել վստահարժան ինստիտուտներ:

**Գ. Կարգավիճակի չեզոք ներգրավում և ներգրավում առանց ճանաչման**

Կարող է մասնակի և նախանձախնդիր Կարող է մասնակի և նախանձախնդիր միջհակամարտային համընկնումներ լինեն այն եզրահանգման վերաբերյալ, որ դե ֆակտո կառույցների մեկուսացումն արդյունավետ չէ: Մեկուսացման ռազմավարությանը չի հաջողվել դե ֆակտո պետություններին ինտեգրել Հարավային Կովկասում: Այս ռազմավարությունները զարգացրել են իրենց ինտեգրումն արտաքին կողմերի հետ և ամրապնդել են ծայրահեղ դիրքորոշումներն իրենց հասարակություններում: Ընդհանուր առմամբ մեկուսացումը ստեղծում է ոչ ճիշտ պատկերացումներ հ ա կ ա մ ա ր տ ու թ յ ա ն յուրաքանչյուր կողմում, ուժեղացնում է թշնամական կարծրատիպերը՝ խորացնելով հակամարտությունը, և նպաստում է միջազգային դերակատարների անտեղյակ և անարդյունավետ քաղաքականության վարմանը:

Չնայած վերջնական սցենարները տարբերվում են, սակայն մի ընդհանուր ներուժի հիմք կա, որը ներգրավման սահմանափակ ձևի հնարավորություն է տալիս: Ներկայումս պաշտոնական մակարդակում աշխատող ոչ մի միջազգային միջնորդ չի վայելում ԼՂ-ի հակամարտության տուժած հասարակությունների ամբողջական վստահությունը: Մինչդեռ կարգավիճակի արտաքին ուղղվածության քննարկումները ցույց են տալիս, որ կարիք կլինի նման միջնորդի: Արդյունավետ ներգրավումը կարող է հնարավորություններ ստեղծել Եվրոպական Միության և այլ միջազգային դերակատարների համար, որոնք կստեղծեն վստահություն, որն էլ անհրաժեշտ կլինի ցանկացած համաձայնագրի իրականացման համար: Ցավոք, եվրոպական կառույցները նվազագույն առնչություն են ունեցել ԼՂ-ի հետ՝ չստեղծելով Շփման գծի (ՇԳ) դիտարկման անհրաժեշտ փոխկապերից այն կողմ այլ կապեր:

Միջազգային մերժումը կամ կառավարման և ինստիտուտների անտեսումը ԼՂ-ին փոխանցել են անօգուտ մեսիջ առ այն, որ չափորոշիչները ԼՂ-ում կարևոր չեն: ՂԿԽ-ի մասնակիցները քննարկել են դրա հետ կապված հարցեր, սակայն տարբերել են կարգավիճակի անկողմնակալ ներգրավման կոնցեպտը և ԵՄ կողմից մշակված քաղաքականությունը՝ “ներգրավում առանց ճանաչման”: Որոշվեց, որ “ներգրավում առանց ճանաչման” մոտեցումը, ինչպես նշված է 2011թ. ապրիլի 7-ի Եվրախորհրդարանի որոշման 48-րդ կետում, ունի բազմաթիվ դրական

հնարավորություններ դիմակայելու մեկուսացման փասակար ազդեցություններին:

Մակայն “ներգրավում առանց ճանաչման” սկզբունքը պետք ընդունել իր սեփական պայմաններում որպես «կիտվ չափ դատարկ, կիտվ չափ լիք» կոնցեպտ: Մա նշանակում է, որ ԼՂ-ի դե ֆակտո իշխանությունները պետք է ընդունեն չճանաչումը ներգրավման հետ և գիտակցեն, որ ԵՄ-ը պետք է հաշվի առնի Ադրբեջանի մտահոգությունները, ինչպես նաև՝ նրանց սեփականը: Նմանապես Ադրբեջանը պետք է ընդունի ներգրավումը ճանաչման հետ միասին և գիտակցի, որ լեգիտիմ շփումները ԼՂ-ի ու արտաքին աշխարհի միջև միջանկյալ ժամանակաշրջանի ընթացքում լինելու են, որն էլ նաև ամրապնդելու է ԼՂ-ի կարողությունները, որպեսզի ի վերջո ընդունի վերադարձողներին:

Դա կպահանջի սկզբունքային մոտեցում ԵՄ կողմից պաշտպանելու ներգրավման հնարավոր խաղաղ շահաբաժիններ բոլոր կողմերի համար: Այն նաև պահանջում է “ներգրավում առանց ճանաչման” սկզբունքի կիրառում, որպեսզի ընդգրկի Ղարաբաղի ազերիների կարիքները: Այս խնդիրը պարզ արտահայտել են ադրբեջանցի մասնակիցները և ընդունել են հայ մասնակիցները, այդ թվում նաև ԼՂ-ի:

“Ներգրավում առանց ճանաչման” սկզբունքը հնարավորություն կտա ԵՄ-ին մեղմ ինտեգրման ազդեցություն ունենալ քաղաքացիական հասարակության և Հայաստանի, Ադրբեջանի ու ԼՂ-ի հասարակությունների միջև քաղաքական մշակույթի զարգացման ոլորտներում: Չափորոշիչներում այս տիպի համընկնումը պետք չէ կապել հակամարտության նախապես որոշված արդյունքների հետ, այլ պետք է դիտել որպես կարևոր ներդրում հակամարտության կողմերի հնարավորություններին

մեջ, որպեսզի երկխոսություն ծավալեն իրենց հասարակություններին ներսում և հասարակություններին միջև:

**Դ. Միջանկյալ կարգավիճակ**

Արտացոլելով արդեն նշված անհամաձայնության կետերը, միջանկյալ կարգավիճակի նշանակությունը և շրջանակը հանդիսանում են առավել խիստ վիճարկվող հարցերը Մադրիդյան սկզբունքների շուրջ:

Խաղաղ գործընթացի բանակցողների կողմից հստակ առաջնորդության բացակայության պայմաններում միջանկյալ կարգավիճակը պարզ սահմանված հայեցակարգ չէ և խոցելի է կարգավիճակը որպես իրադարձություն, այլ ոչ թե կարգավիճակը որպես գործընթաց ընկալման համար: Կողմերը հակված են հասկանալ այն որպես ստատուս քվոյի կամ «հաստատում» կամ «մերժում», այլ ոչ թե որպես մեխանիզմ՝ շարժվելու դեպի մեկ այլ իրավիճակ: Վերջնական կարգավիճակի հետ կապված ստեղծված անորոշությունը՝ իմաստի, ժամկետների ու հարաբերությունների մասին, միջանկյալ կարգավիճակը դարձնում են իրարամերժ: Այն հատկապես խոցելի է ԼՂ-ի քննադատության կողմից, քանի որ բանակցությունները տարվել են այն մարդկանց “գլխից վերև”, ում կարգավիճակը ենթադրվում էր լուծել: Շատերը Ադրբեջանում նույնպես վախենում են, որ միջանկյալ կարգավիճակը կարող է ծառայել որպես ԼՂ-ի անջատումն օրինականացնելու “ինստիտուցիոնալ հնարք”:

**“Մինչդեռ չափորոշիչներ նախքան ճանաչում և ճանաչում նախքան չափորոշիչների միջև կա հնարավոր համընկում՝ դա չափորոշիչների կարևորությունն է:”**





Շուշիի քրյալ շենքերն ու մզկիթը:

Չափավոր ադրբեջանական մոտեցումները միջանկյալ կարգավիճակը ձևակերպում են որպես երկարաժամկետ, հաջորդական մեխանիզմ, որը թույլ կտա բարելավել հարաբերությունները և ստեղծել համակեցության ձևեր ներառական և ներկայացուցչական ինստիտուտների տեսքով: Ըստ այս տրամաբանության՝ երբ հարաբերությունները բարելավվեն և համակեցության աստիճանի հասնեն, ավելի հեշտ կլինի բարձրացնել ԼՂ-ի վերջնական կարգավիճակի հետ կապված ամենադժվար հարցերը: Վկայակոչելով Ադրբեջանի սահմանադրական սահմանափակումները՝ Ադրբեջանի դիրքորոշումն ընդհանուր առմամբ տեսանելի ապագայում ուզում է ամրագրել ժամկետները և ապագայում ընդունել պարտադիր, տեղական և ժողովրդական հնարավոր հանրաքվե անկախության օգտին:

**Միջազգային մերժումը կամ կառավարման և ինստիտուտների անտեսումը ԼՂ-ին փոխանցել են անօգուտ մեսիջ առ այն, որ չափորոշիչները ԼՂ-ում կարևոր չեն:**

Հայկական տեսանկյունը միջանկյալ կարգավիճակը դիտարկում է կասկածանքով՝ որպես ձգձգելու մարտավարություն, և ավելի հակված է խոսել ժամկետների ու վերջնական արդյունքների մասին՝ առանց քննարկելու հայեցակարգի մանրամասները: Հայերը ընդհանուր առմամբ ուզում են քննարկել միջանկյալ կարգավիճակի հայեցակարգը առանց քվեարկության հեռանկարի կոնկրետ ժամկետում, որը մեծապես դիտվում է որպես երաշխավոր նպաստավոր արդյունքների՝ հիմնված տեղական ժողովրդագրական մեծամասնության վրա:

Լեռնային Ղարաբաղի հայերը թշնամաբար են վերաբերվում միջանկյալ կարգավիճակին որպես գաղափար, և մի վերլուծաբանի խոսքերով. «մեզնից զիջումներ են պահանջում և փոխարենը մեզ միայն խոստումներ են տալիս»: Համեմատած այսօրվա բացարձակ անկախության ըմբռնմանը՝ դե յուրե, թե դե ֆակտո, միջանկյալ կարգավիճակը դիտվում է որպես հարաբերական հայեցակարգ, որը նշանակում է ոչ ավելի սուվերեն որոշումների կայացման իշխանություն, քան այսօրվանն է:

Հետևաբար, միջանկյալ կարգավիճակը փնտրում է որպես բաժանարար կոնցեպտ, որը հանրային մշակման և ժողովրդական լեգիտիմության պակաս ունի: Առջևում պարզ ուղիներ չկան: Սակայն պարզ է, որ միջանկյալ կարգավիճակի հիմնական խոչընդոտը

այս հայեցակարգի կապելն է նախապես որոշված արդյունքներին: Միջանկյալ տարրը ներդրում կարող է ունենալ հակամարտության կարգավորման գործընթացում՝ օգնելով տարանջատել միջանկյալ վերջնական կարգավիճակից: Այս կերպ ասած՝ միջանկյալ կարգավիճակը առավել շատ կարող է դիտվել որպես “բանակցային սարահարթ”, քան վերջնական կարգավիճակի համար մի շարք արձանագրված լուծումներ կամ նախագծեր:

Ըստ այդ տրամաբանության՝ միջանկյալ կարգավիճակը նշանավորում է այն կետը, որտեղից բանակցությունները չեն կարող առաջ գնալ, ուստի մի շարք հարցեր դրվել են մի կողմ և մի օր հետ կբերվեն բանակցությունները շարունակելու համար: Սա թույլ է տալիս հիմնական դերակատարներին որոշ ժամանակ շարունակել բանակցությունները,

բայց առավել կարևորն այն է, որ այն դաշտ կբացի այլ տեսակի փոխազդեցությունների համար քաղաքացիական հասարակության և սովորական մարդկային մակարդակներում: Հետևաբար, միջանկյալ կարգավիճակը «սև արկղ» չէ, որը պարունակում է դեղատոմսեր ու լուծումներ: Ընդհակառակը՝ այն դատարկ արկղ է, որի մեջ մարդիկ կարող են դնել գաղափարներ սոցիալական ու քաղաքական փոփոխությունների համար, որոնք կողմերին կբերեն այլ, առավել բաց իրավիճակի:

Այնուամենայնիվ, միջանկյալ պայմանավորվածությունները մշտական դառնալու միտում ունեն: Եթե սա ազդեցություն ունի «կարգավորելու» փոխազդեցությունը՝ լրացնելով այն բացերը, որոնք վերևում նշվել են որպես «բացակայող խոսակցություններ», ապա այն կարող է ապահովել նոր կարևոր ռեսուրս ավելի ուշ ձեռքբերվելիք վերջնական խաղաղության համաձայնագրի համար: Բայց մինչև միջանկյալ կարգավիճակը կարողանա նույնպես ամբողջովին խուսափել կարգավիճակի խնդրի շուրջ անհամաձայնության ծայրահեղ կետերից, այս գաղափարը դժվար թե ԼՂ-ի հակամարտության լուծմանը նպաստի:

Միջանկյալ կարգավիճակը կարող է դիտվել որպես դատարկ արկղ, որի մեջ մարդիկ կարող են դնել գաղափարներ սոցիալական ու քաղաքական փոփոխությունների համար, որոնք կողմերին կբերեն այլ, առավել բաց իրավիճակի:

# Հետագա երկխոսության հնարավոր ելակետերը

## Ա. Կարգավիճակը որպես իրադարձություն և կարգավիճակը որպես գործընթաց

Կարգավիճակի վերաբերյալ քննարկումներում բոլոր կողմերը միտված են խոսել կարգավիճակի մասին փոխադարձ բացառման և նախնական որոշված արդյունքների տեսանկյունից, ինչպիսին են «անկախությունը» կամ «ինքնավարությունը»:

Այս քննարկումը վերաձևակերպման կարիք ունի, որպեսզի տեղ բացի հնարավոր համընկնման կետերի համար, ինչպիսին են ընդհանուր կառավարման, անվտանգության և տնտեսական կարիքները: Մա կարելի է հասկանալ որպես անցում կարգավիճակի իրադարձության վրա հիմնված հասկացությունից (մի բան, որը տեղի է ունենում տվյալ պահին), դեպի կարգավիճակի գործընթացի վրա հիմնված հասկացության, որն իր հերթին հիմնված է իրավունքների ու պարտականությունների վրա:

## Բ. Կիսելով հեռանկարներ կառավարման դեֆիցիտի վերաբերյալ

Կառավարման դեֆիցիտը, որը անցյալի անօրինական արդյունքի արմատական պատճառն է, ընդհանուր շրջանակ է, որը թույլ է տալիս բազմակի ելակետեր դեպի կարգավիճակ/գործընթաց հետագա երկխոսության համար, այլ ոչ թե կարգավիճակ/ իրադարձության համար: Մակայն կառավարման չափորոշիչների քննարկումները պետք է լինեն ամբողջական, որպեսզի արդյունավետ լինեն: Մա վերաբերում է «գուգահեռ ինքնաձևանաչողության» անհրաժեշտության մոտեցմանը, քանի որ կառավարման մասին ցանկացած քննարկում երբեք զուտ հորիզոնական, միջհակամարտային քննարկում չէ, այլ նաև ուղղահայց քննարկում է ինչ-որ մեկի սեփական չափորոշիչների մասին:

## Գ. Կառավարումը ԼՂ-ում՝ շարժվելով «սառը ուսից» այն կողմ

Միջազգային անտեսումը կամ իր կառավարման և ինստիտուտների դատապարտումը ի վերջո նվազեցնում է ԼՂ-ի կարողությունները լեգիտիմ կերպով մասնակցելու հակամարտության վերջնական կարգավորմանը և ընդունելու վերադարձողներին: Նկատի ունենալով սկզբունքային ներգրավումը, իմա՝ ներգրավումն առանց ճանաչման, հետևողական խորհուրդ է տրվում միջազգային հանրությանը, խորհուրդ, որը դուրս է «սառը ուս» քաղաքականությունից: Որպես առաջին քայլ ԵՄ-ն կարող է ուսուժասանիթել ոչ ֆորմալ տեղեկատվական

կենտրոնի բացման հնարավորությունը, որի միջոցով եվրոպական արժեքների և կառուցվածքների վերաբերյալ տեղեկատվություն կտարածի ԼՂ-ում:

## Դ. Ղարաբաղի ադրբեջանցիները՝ փնտրելով ձայն

Ադրբեջանը պետք է տեսանելի հետաքրքրություն ու պատրաստակամություն ցուցաբերի ԼՂ-ում լեգիտիմ կառավարման համար: Ներկայումս կարևոր ուղիներից մեկն այն է, որ Ադրբեջանը կարող է ներդրումներ կատարել Ղարաբաղի ազերիների համայնքի «մայրաքաղաքային կառավարման» մեջ: Մա անհրաժեշտ է ոչ միայն մեղմելու հայերի մտավախությունն առ այն, որ վերադարձողները կատարելու են հինգերորդ շարապյան դերը, այլև ստեղծելու վերադարձողների վստահության հիմքեր ունակությունների ու հմտությունների հետ միասին, որպեսզի կարողանան գոյատևել դժվար քաղաքական պայմաններում: Օրինակ, դրան կարելի է հասնել ընտրված առաջնորդների միջոցով, ովքեր կցուցադրեն թափանցիկության որակներ, արդարություն ու լեգիտիմություն: Մինևույն ժամանակ՝ Բաքուն պետք է հստակ ազդանշան տա, որ ավելի լայն, պաշտոնական երկխոսությունը Բաքվի ու Լեռնային Ղարաբաղի միջև (Ղարաբաղի հայերի ու Ղարաբաղի ազերիների ձևաչափից դուրս), հնարավոր է՝ առանց փաստելու վերջնական կարգավիճակին կամ ճանաչմանը:

## Ե. Շարժվելով «կոպիտ երկրպագուի» բարդության այն կողմ

Կառավարման չափորոշիչների իմաստալից քննարկում չի կարող լինել ռազմական հոետորդության պայմաններում, կամ այնտեղ, որտեղ ուժի կիրառումը հարցականի տակ չի դրվում: ՂԿԽ-ի մասնակիցները նմանեցրել են ԼՂ-ի խաղաղ գործընթացի մի քանի կարևոր հարաբերություններ «կոպիտ երկրպագուի» և իր ընտրած հարսնացուի իրավիճակի հետ, երբ տղան սիրահետելու փոխարեն կոպտում է նրան կամ հրաժարվում է խոսել: Երկրպագուն և հարսնացուն կարող են փոխել իրենց դերերը փոխհարաբերությունների տարբեր փուլերում: Նրանցից յուրաքանչյուրը փոխհարաբերությունների մի փուլում կարող է լինել հարսնացու, իսկ մյուսում՝ «կոպիտ երկրպագու»: Մակայն բոլոր այս հարաբերությունների շրջանակներում նոր հնարավորությունների կարիք կա հանգիստ, ուղիղ փոխգործակցության միջավայրի համար, որտեղ չի լինի ուժի կիրառման սպառնալիք, և բոլորը կընդունեն, նույնիսկ անվերապահ, որ ուժ չի կիրառվի:

Քննարկման ներկայացվող սույն փաստաթուղթը հիմնված է Ղարաբաղի կոնտակտ խմբի (ՂԿԽ) հանդիպումների արդյունքների վրա, մի նախաձեռնություն. որով 2010 թվականին հանդես է եկել Conciliation Resources-ը: Նախաձեռնությունը նպատակ ունի նոր մոտեցումներ մշակել դարաբաղյան հակամարտության նկատմամբ: 2011 թվականի դեկտեմբերի վերջին երեք օրերին Թբիլիսիում կայացած հանդիպմանը մասնակցել է 17 հոգի՝ փորձագետներ և վերլուծական հանրությունների ներկայացուցիչներ Բաքվից, Երևանից և Ստեփանակերտից (Մասնքեդի), Ղարաբաղի ադրբեջանցիներ և հակամարտությունից տուժած այլ անձինք, ինչպես

նաև միջազգային փորձագետներ

քաղաքագիտական և

իրավասահմանադրական ոլորտներից:

Սույն հրատարակությունը հնարավոր է

դարձել Եվրոպական Միության առատաձեռն

աջակցության շնորհիվ: Այստեղ ներկայացված տեսակետները

հիմնված են քննարկումների վրա, սակայն պատկանում են

Conciliation Resources-ին և չեն կարող արտացոլել Եվրոպական

Միության կամ ՂԿԽ անդամների տեսակետները:

Նկարները © Conciliation Resources / Լոուրենս Բրոքերս, եթե այլ

բան նշված չէ:



**CONCILIATION  
RESOURCES**  
working together for peace

173 Upper Street, London N1 1RG, United Kingdom  
Tel: +44 (0) 20 7359 7728 | Fax: +44 (0) 20 7359 4081  
Email: cr@c-r.org Web: www.c-r.org

Charity registered in England and Wales (1055436). © 2011.  
Company limited by guarantee registered in England and Wales (03196482)